Արձանագրություն N 4

«ԵՔ-ԲՄԱԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

24.01.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան (ԳԱ), Բ. Տեր-Թովմասյան (ԲԱ)
Լ. Գևորգյան (ԳԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Է. Շաքարյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

1.2 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

- «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված Մասնակիցը, հրավերով սահմանված ժամկետում, ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

2. Հայտի /որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր/ գնահատման արդյունքները

(Է. Շաքարյան)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	«Հուսալի Կամար» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Հուսալի Կամար» ՍՊԸ -ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. **Աշխատանքների կատարման գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին**

(Է. Շաքարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝

- **Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Հուսալի Կամար» ՍՊԸ -ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տաս օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդ օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Ե. Մատասյան
		Լ. Գևորգյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան